



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՒՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.—
Լուս տեսավ տաղանդավոր երաժշտական Ալ. Շահ-
վերդյանի «Հայ երաժշտական պատմության ակնարկ»
ները ստվար աշխատություն՝ նվիրված ԺԲ—ի դարե-
րի մինչ սովորական շրջանի հայ ազգային երաժշ-
տական մշակույթի զարգացման պատմության ռազմո-
ւասիրման։ Շահվերդյանը վախճանվել է 1954 թվա-
կանին Նրա ներկա աշխատության ձեռագիրը խմբա-
գրել և տպագրության է հանձնել երաժշտագիտ Ռո-
բերտ Աթայանը։ Շահվերդյանի այս արժեքավոր աշ-
խատությունը լուրջ ներդրում է հայ երաժշտական
պատմության գիտական մշակման տեսակետից։

ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՆԴ ԳՅՈՒԹԵՐԻՆ.—
Հայաստանի սովորական գրուների միության տան
դաշնինում նշվեց գերմանական բանաստեղծ Գյորիի
ծննդյան 210-ամյակը։ Նրեկոն կազմակերպել էին Ար-
տասահմանյան երկրների հետ բարեկամության և
կոլլուգական կապի հայկական ընկերությունը և Հա-
յաստանի սովորական գրուների միությանը։ Հան-
գիտությունը սկսվեց գրող Գ. Սեռնցի ներածական
խորսով, որից հետո մեծ գրողի կյանքի և ստեղծա-
գործությունների մասին զեկուցեց Ս. Սողոմոնյանը։
Երեկոյին ընթերցվեցին Գյորիի ստեղծագործություն-
ներից։

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՄԿՐՑՈՒՄ ԵՎ ԱՂԱԲՈՆ ՀՈՎՆԱ-
ԹԱՆՑԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.—Թրիլիսի Պետական կենտ-
րոնական պատմական արխիվում գտնվել են նոր
նյութեր, որոնք լուս են սփռում Մկրտում և Աղաբոն
Հովնաթանների կյանքի շուրջ։ Առաջինը որդին
էր անվանի նկարի Հովնաթանի, իսկ երկրորդը՝ թո-
ռու։ Մկրտումը բան տարեկան հասակում իր հորը՝
Հովնաթանի հետ աշխատել է Ս. Էջմաննի Մալը Տա-
ճարի որմանկարների վրա, որոնք իրենց տեսակի մեջ
եղել են շատ աշքառու Ռժունամյա ժերումնի դի-
մում է Անդրկովկասի գլխավոր կառավարչին խնդրե-
լով, որ իրեն ազատեն պարհակից, պատճառաբանե-
լով որ «Այժմ երկրորդ տարին է ահա, ինչ ես կի-
սամերկ, համարյա թե անկենդան պառկած եմ ան-
կողնում և նկարչի համար ամենաէական գործիքները»

աշքերս ու ձեռքերս անգործության են մատնված,
գլխիս կեար և ձախ ու ուրս նույնպես շեն գործում։
Նույնքան ժանր ծերություն էր վերապահված նաև
Մկրտումի երկրորդ որդուն՝ Աղաբոնին, սակայն, հա-
կառակ իր ընդունակություններին, նա ստիպված էր
աշխատել որպես Պետերբուրգի հայկական եկեղեցա-
կան տան կառավարիչ։ Մերացած ու հիվանդագին,
նա ստիպված է աշխատանքից հեռանալ և իր գիմու-
մի համաձայն նրան ազատում են աշխատանքից։ Խա-
նակելով 50 ոսումի կենսաթոշակի Այդ մասին են վկա-
յում Լենինգրադի մարզի պետական արխիվի Հայկա-
կան եկեղեցների խորհրդի Փոնդում պահպանված
չորս փաստաթղթերը։ Աղաբոն Հովնաթանյանը մահա-
ցել է 1893 թվականին և թաղվել է Պետերբուրգում։
Այս փաստաթղթերը գտել և հրատարակել է Մանյա
Ղազարյանը։

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.—
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրա-
տարակությունը լուս է ընծայել Հ. Ս. Անապյանի
Հայկական Մատենագիտությունն խորագրով մեծա-
ծավալ աշխատության առաջին հատորը։ Անապյանի
այս և հաջորդ հատորները քննդրկելու են Ե-ԺԸ գա-
ռների հայ ինքնուրուց ու թարգմանական գրականու-
թյան տպագիր և անտիպ նյութերի մասնենագիտական
մշակումը ներկա աշխատությունը հայագիտական
ուսումնասիրությունների հետագա զարգացման նպաս-
տող խոշոր ներդրում է։

ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԹԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏՈՆԱՀԱՆ-
ԳԵՄ «ՈՍԿԵ ԱՇԽԻՆ»։ Սեպտեմբերի 19-ի և 20-ի
անընաշող օրերին, նրեանի պեսպուրլիկական ստա-
դիոնում կազմակերպվեց Համաժողովրդական մեծ
տոն՝ «Ոսկե աշումա անոնով» Տոնին իրենց մասնակ-
ցությունը թերեցին Հայաստանի և Սովորական Միու-
թյան մի շարք սեսպուրլիկաների նշանավոր դերա-
սանները, կիոնյի հանրածանոթ արվեստագիտները։
«Ոսկե աշնան» հանդիսավոր արարողությունը բացեց
ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյա-
նը Տոնահանգիսը բաղկացած էր երկու մասից։ Ա-
ռաջին մասում բազմահազար հանդիսատեսները սիրով

ու հպարտովթյամբ դիտեցին հայ ժողովրդի գուցա-
զում զավակներին, որոնք իրենց արյամբ պաշտպանել
են մեր Հայրենի հողը ու հայ ժողովրդի հոգում միշտ
վառ պահել հույսի և լույսի ծրագր։ Ստափոնով անց-
նում են Սատոնցի Դավիթը, Կարդան Սամիկնյանն
ու Դավիթ Թեկը՝ հանդիսականների մեջ առաջացնելով
Հայրենասիրական բուռն փոխորդիկ, Առող ծափեր և
օվացիաներ, Այնուհետև Երևանի գործարանների և
կուտանսեալին դաշտերի աշխատողները ցուցադրում
են իրենց նվիրական աշխատանքի վաստակը, Երկրորդ
մասը նվիրված էր Համերգների, որի ընթացքում ե-
լույթ ունեցան Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից ժա-
մանած և երևանցի արտիստները։

ԵՐԵՎԱՆԻ ՕՏՏԱԿԱՆԻ 90—ԱՄՄԱԿԸ. — Սեպտեմբեր ամ-
սին լրացավ մեծ երգիչարան, վիճական, հրապարա-
կախոս, դրամատուրգ և քննադատ Թրաման Շտյանի
ծննդյան 90-ամյակը։ Մեծանուն գորող-երգիչարանի
ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Երևանի Ալ-
Մյասնիկյանի անվան Պետական գրադարանում բաց-
վեց ցուցահանդես, որտեղ ներկայացված էին երգի-
ծաբանի ստեղծագործությունները։ Հրատարակված
տարրեր շրջաններում և տարրեր վայրերում։ Ցուցա-
հանդեսում ներկայացված էին նաև քննադատական
հոգվածներ ու հիշողություններ Շտյանի մասին։

ՀԱՅ ԿԻՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ է ԴԻԿԸՆՈՒԻ
ԱՍՏԻՃԱՆ. — Անցյալ տարվա գեկտեմբերին ՍՍՌՄ
Գիտությունների ակադեմիայի համաշխարհային գրա-
կանության պատմության ինստիտուտի գիտական
խորհրդում բանասիրական գիտությունների թեկնածու
Սալամե Արեցյանը պաշտպանեց իր «Հայ մատուցը և
ցարական ցենզուրան» դոկտորական գիտերացիան,
որին արժանացավ ընդհանուր հավանության և գիտա-
կան խորհրդու որոշեց նրան շնորհել բանասիրական
գիտությունների դոկտորի աստիճան։ Կերպերու ատես-
տացիոն հանձնաժողովը հաստատեց գիտական խոր-
հրդու որոշումը։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱԳՈՒՅՑՆ ՎԻՐԱԲՈՒԺՃԸ. —
Սեպտեմբերի 12-ին Հայաստանի թժկական հասարա-
կայնությունը նշեց անվանի վիրարուց, գիտության
վաստակավոր գործիք, պրոֆ. Քրիստափոր Պետրոսյանի
ծննդյան 70-ամյակը։ Շուրջ երեսում տարի է պրոֆ.
Պետրոսյանը զեկալսրում է Երևանի թժկական ինս-
տիտուտի տոպոգրաֆիկ անատոմիայի և օպերատիկ
վիրարության ամրինու Այժմ Հայաստանում աշ-
խատող շատ վիրարուցներ նրա նախկին ուսանող-
ներն են նա ծանոթ է նաև միութինական լայն շրջա-
նի վիրարութական հասարակայինություններու ջնայած իր
70-ամյա տարիքին, բազմավաստակ պրոֆեսորը լի-
նում է մեր ուսապուրիկայի բոլոր շրջաններում՝ բարդ
վիրահատություններ կատարելու և երիտասարդ թիշկ-
ներին օգնելու համար։

Ա. ԵՐԵՎԱՆԱԳԱԴԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. — Երե-
վանի Ա. Մատենագիտականի անվան Պետական գրադարա-
նը լույս ընծայեց վիպասան, դրամատուրգ Ա. Երե-
վանի վիպագիտական նվիրված 240 էջից, Մատենագիտությունը կազմել է

գրադարանի տեղեկատու բիբլիոգրաֆիական բաժի-
նը, խմբագրել և առաջարանը գրել է բանասիրական
գիտությունների թեկնածու Հ. Թամրազյանը։

ՄՈՎՍԵՍ ՄՐԱԶՈՒ ՇԽՄԱՅԵԼ ՕՐԻ ՊԱՏՄԱՎԵՓԻ
ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ. — Հայպետհրատի հրատարակ-
չությունը լույս ընծայեց նշանավոր արձակագիր Մ.
Արազու «Խարակել Օրի» պատմավեպի առաջին գիրքը,
որին սպասում էր ընթերցող հասարակությունը։
Այդ վեպի գաղափարն է օտար բռնակալների գևմ հայ
ժողովրդի մղած ազատարական պաշտարը, Հայաս-
տանի ազատության և անկախության գաղափարը։ Վե-
պը սկզբում է Օրու Հայրենիք վերադարձով։ Հետագա
գլուխները նվիրված են Օրու գործունեությանը Անգե-
ղակոթուակ և Գանձառությամբ որտեղ հաջողությամբ ա-
վարտելով իր առաքելությունը, Օրին վերադառնում է
ծվարապա, շարժմակերտ համար հայ ժողովրդի ազա-
տարության նվիրական գործը Մրանով էլ ավարտ-
վում է վեպի առաջին գիրք։

ԳԻՇԵՐՈՅԹԻԿ ՆՈՐ ԳԻՇԵՐՈՅՆԵՐ. — Այս տարվա սեպ-
տեմբերը ամսից գիշերոյթիկ նոր դպրոցներ գործում են
Երևանում, Յրազանում, Էջմիածին քաղաքում և Քա-
նաքեռում։ Այդ նոր գիշերոյթիկ դպրոցներում ընդգրոկ-
վել են ավելի քան երկու հազար երեխաները Երևանի
քաղաքային Սովետի գործումը հողածառեր է հատ-
կացրել չորս նոր գիշերոյթիկ դպրոցների շենքեր կա-
ռուցելու համար։

ՔԵՆՆԱԿԱԿՈՐՄԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՆԻՍՏԸ. — Վեցինս
տեղի ունեցավ Հայաստանի Կերպարվեստականի
միության Քանդակագործական բաժնի ընդլայնված
նիստը, որտեղ քաղաքի գլխավոր ճարտարապետ էր։
Սարապյանը զեկուցեց առաջիկա յոթնայինում իրե-
վանում կառուցվելիք ճարտարապետական հուշարձան-
ների մասին։ Զեկուցման շուրջը ծավալվեց մոքերի
աշխալս գիտանակություն և արծարծվեցին Հայրենի
քաղաքի ճարտարապետական ճիշճակուրման ու ոհ-
ղեցացման մի շարք խնդիրներ։ Ստեղծվեց մի հանձ-
նաժողով, որի նպատակը պետք է լինի քաղաքի ճար-
տարապետական ճիշճակուրման մեջ մեկնարկումը
և ճարտարապետական օնություն ցույց տալը։ Հանձ-
նաժողովի կազմի մեջ մտան Հայկական ՍՍՌ ժողո-
վրդական նկարիններ Ա. Սարգսյանը, Ս. Ստեփանյանը,
Ք. Քանդակագործներ Պ. Չուբարյանը, Գ. Ահարոնյանը,
Կ. Մեծասուլյանը և Ս. Քաղղասսարյանը։

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԵՑՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅԱՆ. — Երևանի Պետական համալսարանի 12 ֆա-
կուլտետները երկին այս տարի տվեցին 794 երթու-
արդ մասնագետներ երկրաբաններ, քիմիկուներ,
ֆիզիկուներ, մնտեսագետներ; բանասիրներ, պատմա-
բաններ, գենսարաններ և այլն։ Պոլիտեխնիկական
ինստիտուտն ավարտեցին մոտ 600 մասնագետներ,
թժկական ինստիտուտը՝ 350, Գուլացատունիսականը՝
328, Անասնարութական-անասնաբուժականը՝ 235,
հաշտուուր Արովյանի անվան Հայկական մանկավար-
ժական ինստիտուտը՝ 302 մասնագետներ։ Այս նոր
շրջանագարտները աշխատանքի են նշանակվել։ Հա-

յաստանի, ինչպես նաև եղբայրական ռեսպուլիկաների քաղաքներում և շրջաններում։
ՎԱՀԱՆ ՌՈԹՈՎՅԵՆՅԻ ԱՄԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒՄԵՐԻՑ. — Երեանի Գրականության և արվեստի թանգարանի մի շարք արժնավոր նյութեր է ստացել Վահան Թոփովենցի հարազատներից, որով թանգարանում հիմք է դրվել Վահան Թոփովենցի ֆոնդի, որը տարհների բնագրում պիտի հարստանա նոր նյութերով։ Ստացվել են «Դարում», գարուն պատմվածքի ինքնադրու, մի խոշոր վեպի նախնական էսքիզը, որը նվիրված է հայ ժողովրդի անցյալ կյանքին, Հովհաննես Թումանյանի մասին գրած հնատարքից հուշեր և այլ ձեռագրեր։ Ստացված նյութերի մեջ մեծ արժեք են ներկայացնում Վ. Թոփովենցի գրած և մի շարք գրուներից ու գրականագետներից և այլ անձանց կողմից ստացված նամակներն ու պաշտոնական գրությունները։ Կան նամակներ Գ. Գևարգյանից, Սա. Զորյանից, Մ. Քանանից, Ա. Սարգսյանից և ուրիշներից։

ՀԱՅ ՄԵԾ ԳԻՏԱԿԱՆ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՑԱՆԻ ՀԻԾԱ-
ՏԱԿԻՆ. — Սեպտեմբերի 24-ին Հայկական ՍՍՌ Գի-
տությունների ակադեմիայի Մանուկ Արեգակն ան-
վան գրականության ինստիտուտի նիստերի դաշինում,
նույն ինստիտուտի հրավերով սկսվեց դիտական նըս-
տաշրջան՝ նվիրված մեծ գիտականի մաշվան 15-ամ-
յակին։ Այդ օրը նիստերի դաշինն էին հավաքվել մեր գիտության ու կուտարայի և արվեստի ականավոր գործիչներ։ Թացման խորով հանդես է գալիս բա-
նասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալան-
յանը, որը վեր է հանում բազմավաստակ գիտականի
անցած բնույն ստեղծագործական ուղին։

Նստաշրջանում լսկեցին մի շարք թեմաներով՝ առ-
ձերավոր զեկուցումներ։

Սեպտեմբերի 24-ին Հայկական ՍՍՌ Գիտություն-
ների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ.-դոկտ. է.
Աղայանը «Մանուկ Արեգակն ի լեզվաբանական ժա-
ռանգությունը» և բանասիրական գիտությունների թեկ-
նածու Ա. Սարինյանը «Մանուկ Արեգակն գրական
բնագատ» թեմաներով զեկուցումներ կարդացին։

Սեպտեմբերի 25-ի նիստում պրոֆ. Գ. Արովը և
րանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ազգա-
բեկյանը զեկուցումներ կարդացին «Մ. Արեգակնը և
Հայոց լեզվի տաղաչափությունը» և «Մ. Արեգակնը
որպես հայ հին գրականության պատմաբան» թեմա-
ներով։

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՄՅԱՆ ՍՆՆԴՑԱՆ ՅՈ-ՅԱԿԻ ԱՌԹԻՎ. —
Ակսել Բակումյանը սովորացայ ականավոր արձակա-
գիրներից մեկն է, որի արվեստը խորապես ինքնա-
տիկ և անկրկնելի է,

1959 թվականի հոկտեմբերին լրանում է Ակսել
Բակումյան 60-ամյակը։ Այդ կապակցությամբ
մեր հայրենի կառավարությունը ստեղծել է Հորեցա-
նական Հանձնաժողով, որի կազմում են Վ. Ալա-
գանը, Ս. Աղարարյանը, Մ. Արագին, Գ. Պալասահ-
յանը, Հովհ. Բաղդասարյանը, Ստ. Զորյանը, Էդ.
Թովովյանը, Ս. Խանզադյանը, Ա. Խաչարյանը, Ա.
Խաչատրյանը, Գ. Հայրյանը, Հր. Հովհաննիսյանը, Գ.
Հովհաննիսյանը, Գ. Մահարին, Հր. Մարգարյանը, Ա. Շա-
հինյանը, Ս. Պայազարը, Հ. Սահյանը, Գ. Սարյանը,
Գ. Սետեցը, և. Ստեփանյանը (Խախագան), Հր. Քո-
շարը։

Հորեցանական հանդիսավոր նիստը տեղի կունենա-
ծովածմբերի 24-ին Երևան բաղաքում։ Այդ առթիվ
Հայաստանի բոլոր բաղաքներում, շրջաններում, գոպ-
րացներում ու բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններում կկազմակերպվեն գրական երեկոներ՝ նվիր-
ված Ակսել Բակումյանի հայական ու ստեղծագործությանը։
Կառավարության որոշումով Գորիս բաղաքում կանգ-
նեցվելու է Բակումյանի կիսանդրին, իսկ Երևանում,
այն տանը, որտեղ գրողը ապրել ու աշխատել է,
կամբցիցին հուշատախտակներ։ Հորեցանի առթիվ
հարատարակվեն նրա ստեղծագործություններից ժո-
ղովածուներ և իր կյանքին ու գրական գործունեու-
թյանը նվիրված բրուտուններ։

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԴ

